Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ ԹԻՎ 63-Ն ԵՎ 64-Ա-69-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 63-Ն որոշման 2-րդ կետի համարակալումը բացակայում է։

Թիվ 64-Ա որոշման բովանդակությունը հղում է պարունակում հավելվածին, սակայն հավելվածը կից ներկայացված չէ։

Թիվ 65-Ա որոշումը չի համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի դրույթներին։ Անհրաժեշտ էր ղեկավարվել նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթներով։

Որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 13-րդ մասի (ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած, պետական գրանցման պահից) և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի (իրավաբանական անձը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը՝ դադարած, պետական գրանցման պահից) դրույթներին։ Բացի այդ, որոշմանը կից ներկայացված չէ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 28-ի N 287-Ա որոշումը և «Արթիկի արևային էլեկտրակայան» ՓԲԸ-ի լուծարային հաշվեկշիռը։

Թիվ թիվ 66-Ա-68-Ա որոշումները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, համաձայն որոնց նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով։

Թիվ 69-Ա որոշման 1-ին կետում գրառված չէ փոփոխվող իրավական ակտի լրիվ անվանումը։ Բացի այդ, կատարված փոփոխությունը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներին, համաձայն որոնց նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են բառեր, թվեր կամ կետադրական նշաններ այլ բառերով, թվերով կամ կետադրական նշաններով փոխարինելու միջոցով։

*Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան*
*21.10.2021թ.*